

**ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ
ՔԱՌԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

ՌՈՐԵՐ ՏԵՐԵՐԿԵՐՑԱՆ (Ֆրանսիա)

Հալո՞ք դասական լեզվի երկու գրական աշխարհաբար տարբերակների ճյուղավորման հետևանքները կարելի է քննել երկու տեսանկյունից.

1. ազգային միասնության, նրա հոգևոր կյանքի ու մշակույթի՝ վրա ունեցած հետևանքների և՛

2. զուտ լեզվաբանական հետևանքների տեսանկյուններից:

Եթե ընդունենք, որ լեզուն ազգային միության ու նրա ինքնության պահպանման ամենակայուն ու հիմնական խորհրդանիշն է, ապա լեզվի տրոհման հետևանքները, ըստ մեզ, բացասական են, որովհետև մեր լեզվի երկու տարբերակների զարգացման ներկա փուլը իր մեջ պարունակում է ազգային միասնության խախտման կամ ընդհատման վտանգ:

Զուտ լեզվաբանական տեսանկյունից, միևնույն լեզվի երկու տարբերակների ճյուղավորումը յուրահատուկ հնարավորություններ է ընձեռում համեմատության միջոցով քննելու տարբեր հասարակական, տնտեսական ու մշակութային պայմաններում զուգահեռաբար գործառող երկու տարբերակների բառային համակարգերի համալրման ձևերն ու միջոցները: Այդպիսի համեմատությունը հետաքրքրական է հատկապես միևնույն նոր հղացքների, նոր հասկացությունների համար նորաբանություններ կազմելու տարբեր լուծումների քննության առումով:

Իրականում լեզվի ճյուղավորման ազգային-մշակութային և զուտ լեզվաբանական հետևանքների միջև գոյություն ունի սերտ կապ, քանի որ ազգապահպանումը, ազգային միասնական մշակույթի ներդաշնակ զարգացումը՝ կապված են լեզվի՝ ազգային միասնությունը խորհրդանշող դերի հետ, այսինքն՝ որքանով որ մեծանա երկու տարբերակների լեզվական անջրպետը, այդքանով էլ կխախտվի ազգային միությունը:

Ներկա ուսումնասիրության մեջ մեր նպատակն է սահմանել վերջին տասնամյակների ընթացքում երկու տարբերակների բառապաշարների զարգացման ուղղվածությունն ու միտումները առանձին-առանձին և նորակերտ բառային միավորների զուգադրական համեմատության միջոցով երևան հանել երկու տարբերակների բառապաշարների փոխհարաբերությունները, նշանց մերձեցումը կամ հեռանալու աստիճանը: Երկու տարբերակների բառապաշարների հարստացման, լեզվամիջոցների տարժամանակյա զուգադրական-համեմատական ուսումնասիրության միջոցով կարելի է նաև որոշակիորեն ի հայտ բերել, թե նոր բառերի կերտման ոլորտում ինչ շափով է շրջապատը, այսինքն՝ արտալեզվական գործոններն ու իրողությունները, ազդում միևնույն լեզվի երկու տարբերակների անընդհատ համալրվող բառապաշարների վրա:

Նշենք նաև, որ երկու գրական տարբերակների բառապաշարների մերձեցումը կամ հեռանալը և ընդհանրապես նրանց փոխհարաբերությունները նույնպես կապված են ազգային միասնական լեզվի, լեզվապահպանման և ընդհանուր ազգային մշակույթի հետագա զարգացման հարցերի հետ:

Պետք է ասել, որ եթե վերջին երեք տասնամյակների ընթացքում արեւելահայ գրական տաճարակի բառապաշարի զարգացմանը նվիրված հա-

մամուլում անակյա կամ տարժամանակյա ուսումնասիրություններ շատ են եղել, ապա արևմտահայ պրակտիկ տարրերակի դարգացման, հարստացման հարցերի շուրջ առ այսօր ոչ մի ուսումնասիրություն չի եղել, բացի Վ. Ա. Էկմյանի «Գրական արևմտահայերենի ձևավորումը» աշխատությունը, որի մեջ գլուխը նվիրված է բառապաշարի մշակման հարցերին¹։ Ինչ վերաբերում է երկու զրական տարրերակների դուգադրական-տիպարական բրն-նությունը, ապա մինչև այժմ եղել է մեկ ուսումնասիրություն՝ Ա. Սարգսյանի «Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ» աշխատությունը, որի մեկ գլուխը նվիրված է երկու տարրերակների բառապաշարների դուգադրական-տիպարական համամասնակյա բնութայնը²։

Համեմատության համար ընտրել ենք վերջին 70 տարիների ժամանակաշրջանը, սկսած 1915—20-ական թթ. մինչև 1980-ական թթ.։ Այս ժամանակաշրջանը հետաքրքրական է նրանով, որ երկու տարրերակներով հագուդակցվողները՝ արևմտահայերը և արևելահայերը, վերջին 7 տասնամյակների ընթացքում ապրում են միևնույն անփոփոխ աշխարհագրական, բաղադրական, պետական ու սոցիալական պայմաններում։ Այդ ընթացքում արևելահայ տարրերակը բարձրացել է պետական լեզվի աստիճանի, իսկ արևմտահայ տարրերակով հագուդակցվողները, բռնի տեղահանության ենթարկված, ցրված, ապրում են աշխարհի տարբեր երկրներում ու կաղմել են սփյուռք։ Տարածամանակյա համեմատության համար նպատակահարմար ենք համարել նշված ժամանակաշրջանը բաժանել երկու հիմնական փուլերի՝ 1920-ական թթ. մինչև հետպատերազմյան տարիները և 1950-ական թթ. մինչև 1980-ական թթ.։ Բացի այդ, պետք է ավելացնել, որ ներկա ուղադրական համեմատության համար որպես բնական նյութ³ ընտրել ենք վերոհիշյալ ժամանակաշրջանի ընթացքում կաղմված նորարանությունները կամ լեզվի մեջ արտաբերյալ կամ ներքին լեզվամիջոցներով ներմուծված նոր բառերը, առանց զրանք դասակարգելու ըստ իմաստային դաշտերի կամ բառիմաստային կարգերի։ Մենք չենք դիրքորոշվի նաև երկու տարբերակների մեջ կատարված փոխանությունների ճիշտ կամ սխալ լինելու, ներքին

1 Տե՛ս, օրինակ, Ա. Մուրվալյան. Հայոց լեզվի բառային կաղմ. Երևան, 1955; Ս. Ղազարյան. Ժամանակակից հայոց լեզուն և ուսուցիչների դերը նրա զարգացման մեջ. Երևան, 1955; Տերմերկերյանի ուղեցույց. Երևան, 1984; Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի թնարկումը. — «Երբեք հասարակական գիտություններ», 1971, № 9, Վ. Աճեմյան. Գրական արևմտահայերենի ձևավորումը. Երեւան, 1971; Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում. Երևան, 1973; Տերմերկերյանի և խոսքի մշակույթի հարցեր. Երևան, 1976; Տերմերկերյանի և ուղղագրական տեղեկատու. Երևան, 1978; Հ. Օհանյան. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները. Երևան, 1982; Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության. Երևան, 1982; Է. Գ. Աղայան. Ընդհանուր և հայկական բառագիտություն. Երևան, 1984; Տերմերկերյանի և ուղղագրական տեղեկատու. Երևան, 1984; Ա. Սարգսյան. Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ. Երևան, 1985; Տերմերկերյանի և խոսքի մշակույթի հարցեր. 2, Երևան, 1987։

2 Վ. Աճեմյան. Նշվ. աշխ., էջ 169—212։

3 Ա. Սարգսյան. Նշվ. աշխ., էջ 86—165։

4 Նորարանությունների ընտրանքը քաղված է արևմտահայ և արևելահայ մամուլի էջերից։ Արևմտահայ մամուլ. «Աշխարհ», շաբաթաթերթ, Փարիզ. «Հառաջ», օրաթերթ, Փարիզ. «Էրեւունք», երկշաբաթաթերթ, Լոնդոն. «Արև», օրաթերթ, Կահիրե. «Զարթոնք», օրաթերթ, ԱՄՆ. Արևելահայ մամուլ. «Հայրենիքի ձայն», շաբաթաթերթ. «Գրական թերթ», շաբաթաթերթ. «Սովետական Հայաստան», ամսագիր. «Գրքերի աշխարհ», ամսաթերթ. «Արև», օրաթերթ, Թեհրան։ Բոլոր համարները լույս են տեսել վերջին 7—8 ամիսների ընթացքում։ 1977—1987 թթ. ընթացքում կաղմված նորարանություններ ենք համարել այն բառային միավորները, որոնք զրանցված չեն է. Աղայանի «Արգի հայերենի բացատրական բառարանում» (Երևան, 1976)։

լեզվամիջոցներով կազմված նորաբանությունների հաջող կամ անհաջող լինելու նկատմամբ: Կոստանափակվենք միայն երկու տարբերակների բառապաշարների հարստացման միտումների համեմատությամբ ու փոխհարաբերությամբ՝ հաշվի առնելով հաղորդակցվողների հասարակական-քաղաքական ու մշակութային պայմանները:

Առաջին փուլ. 1920-ական թթ. մինչև հետպատերազմյան տարիներ. 1920-ական, 1930-ական թթ. արևմտահայ տարբերակով հաղորդակցվողների համար եղան ծանր, դժվարին տարիներ. անհրաժեշտ էր հարմարվել նոր ընդունող երկրի կարգ ու կանոնին, վարք ու բարքին: Հայրենի հողից կտրված, արմատախիլ ավագ սերնդի գլխավոր պարտականություններից էր երիտասարդ՝ երկրորդ սերնդին փոխանցել, ավանդել մայրենի լեզուն: Դա կատարվեց դժվարագույն պայմաններում, ամենից հաճախ՝ ընտանեկան պայմաններում, մինչև նոր դպրոցներ հիմնելը: 1920-ական թթ. վերջերին և 30-ական թթ. բացվում են մի շարք դպրոցներ այս կամ այն չափով արմատավորված հայ գաղութներում՝ Լիբանանում, Եգիպտոսում, Կիպրոսում: Օտար երկրներում ապրող-մեծացող երկրորդ սերնդի համար հայապահպանում նոր բառը դառնում է հոմանիշ լեզվապահպանում բառին: Հիմնադրվում են թերթեր, ամսագրեր, կազմավորվում են նոր մտավորականություն, ուսուցիչներ, լրագրողներ, մամուլ: Բառապաշարի հարստացման, նորաբանությունների կազմավորման տեսակետից այս ժամանակաշրջանի ընթացքում արևմտյան տարբերակին բնորոշ է փոխառություններից խուսափելը, լեզվի բառապաշարը անաղարտ պահելը, նոր հասկացությունները պատճենումնեղով արտահայտելը, օտար բառերը հետևողականորեն մերժելու և միշտ հայացնելու ձգտումը: Լեզուն օտարաբանություններից անաղարտ պահելը ինքնապաշտպանության միջոց է փոքրամասնությունների համար: Ակնհայտ է, որ արտալեզվական գործոնները՝ հաղորդակցվողների հասարակական-քաղաքական, մշակութային պայմանները, մանավանդ նրանց ձուլման վտանգի մեջ գտնվելը, ուղղակիորեն ներգործում են արևմտահայ տարբերակի բառապաշարի համալրման միջոցների ընտրության վրա: Նորաբանությունները կազմվում են ներքին լեզվամիջոցներով՝ ածանցում, բառաբարդում, նոր հղացքները հաճախ պատճենումնեղ են, ինչպես՝ հեռաձայն, հեռատեսիլ, ինքնաշարժ: Նույնիսկ միջազգային համարվող բառապաշարը, որը փոխառվում է գրեթե բոլոր լեզուներում, արևմտահայ տարբերակի մեջ պատճենվում է. րեկեվարակա՝ սոցիալիստական, դրամատիկական՝ կապիտալիստական, համայնավար՝ կոմունիստ: Կարելի է ասել, որ այդ տարիների ընթացքում նույնիսկ առօրյա խոսակցական լեզուն սուրկ էր օտարաբանություններից, քանի որ մայրենի լեզուն՝ հայերենը, բնական հաղորդակցության միջոց էր ամբողջ սփյուռքի համար: Այլ կերպ չէր կարող լինել, քանի որ նրանք դեռևս անծանոթ էին կամ հազիվ էին հասկանում ընդունող երկրի պետական լեզուն:

1920-ական թթ. սկսվում է արևելահայ տարբերակի պատմության, Գ. Սեվակի բնորոշմամբ, սովետական շրջանը: Հաղորդակցման միջոց ու մշակութային գործիք լինելուց բացի, արևելահայ տարբերակը դառնում է միևնույն աշխարհաբարական սահմանների մեջ համախմբված հայերի պետական լեզու: Այն կիրարկվում է պետական, պաշտոնական գործունեության ոլորտում, դառնում է կառավարման լեզու: Ինչպես հայտնի է, լեզուն ժամանակաշրջանի նոր պահանջներին հարմարվում է նախ և առաջ բառապաշարի համալրմամբ: Նոր վարչակարգը, հեղափոխությունը երևան հանեցին գրեթե բոլոր բնագավառներին վերաբերող, մինչև այդ գոյություն չունեցող հասկացություններ, որոնք անհրաժեշտ էր կարճ ժամանակամիջոցում արտահայտել նորաբանություններով: Այդ իսկ պատճառով 1920—30-ական թթ. արևելահայ տարբերակի բառապաշարը համալրվում է մեծ թվով նորաբանություններով: Կազմված թե՛ արտաքին և թե՛ ներքին լեզվամիջոցներով: Սակայն պետք է ասել, որ նոր հասկացությունների, հղացքների քանակն այնքան մեծ

էր և նրանց սղտադործումը անքան հրատապ, որ հաճախ ուղղակի փոխառվում էր ռուսերէն բառը, առանց ներքին լեզվամիջոցներին դիմելու: Այս ժամանակաշրջանի արեւելահայ տարրերակի մեջ տեղի ունեցած բառային տեղաշարժերը ուսումնասիրված են «Հայոց լեզվի դարգացումը սովետական շրջանում» գրքում, որտեղ կարելի է կարդալ. «Սովետական իշխանութիւն հաստատման առաջին տարիներին մեր լեզվի դոները լայնորէն բացվեցին օտարազգի բառերի առաջ, որի հետեանքով փոխառութիւնների մուտքը հայերէնի մեջ մեծ չափերի հասաւ: Զկար որեւէ սահմանադրութիւն ու արդիւյթ օտար բառերի գործածութիւնը հարցում: Այդ պատճառով էլ փոխառյալ անհարկի բառերի գործածութիւնը շատ սովորական երևույթ դարձաւ: Ոտար բաղմաթիւ բառեր սկսեցին գործածվել մեր լեզվի մեջ առանց անհրաժեշտութիւն: Դրժբախտարար այդ միտումը շարունակվեց շուրջ երեք տասնամյակ, որը անհարկի օտար բառերով մեր լեզուն խճողելու պատճառ հանդիսացաւ»⁵, 1933 թ. ստեղծված տերմինաբանական խորհուրդը, որը 1955 թ. կոչվում է տերմինաբանական կոմիտե, և որի հիմնական դերը լեզվի անաղարտութիւնը պահպանելն է, ի վիճակի չեղաւ դադարեցնել օտար բառերի ներհոսքը լեզվի բառապաշարի մեջ: Անհարկի փոխառութիւնները՝ երևան բերեցին բառադուլդեր, ինչպէս՝ «զաւոյդ—գործարան, Լտաժ—հուրէ, պալտո—վերաբերու, սլոսպելտ—պլոտտա» և այլն: Ընդհանուր առմամբ, այդ ժամանակաշրջանի ընթացքում արեւելահայ տարրերակին բնորոշ է մեծ քանակութիւնը փոխառութիւնների մուտքը, մանավանդ անհարկի օտարաբանութիւնների պործածութիւնը թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքի մեջ, և այդ միտումը բացահայտ ձեւով դրսևորվում է շուրջ երեք ու կէս տասնամյակ:

1920—30—40-ական թթ. ընթացքում երկու տարբերակներով հաղորդակցվողների հասարակական-բաղարական, մշակութային պայմանների համեմատութիւնից, ինչպէս նաև այդ ժամանակաշրջանում կազմված նորաբանութիւնների դուզադրական համեմատութիւնից կարելի է եղրակացնել. երկու տարբերակներով հաղորդակցվողների միջև չկա ոչ մի շփում, Ուրեմը վայնույնի արտահայտութիւնը՝ լեզվական կոնտակտ, չկա ոչ քաղաքական-սոցիալական, ոչ մշակութային հարաբերութիւնը, հետեաբար չկա նաև լեզվական միջդիպում: Երկու տարբերակները յուրովի ու իրարից անկախ են լուծում նորաբանութիւնների կերտման խնդիրները: Միևնույն նոր հասկացութիւններն ու հղացքները արտահայտվում են տարբեր բառային միավորներով, նույնիսկ այն դեպքում, երբ երկու տարբերակները դիմում են ներքին լեզվամիջոցներին:

ատենապետ—նախագահ

կոփամարտ—բռնցքամարտ

պանդոկ—հյուրանոց

հանձնարարյալ նամակ—պատվիրված նամակ

շարժավար—վարորդ

գործատուն—գործարան

հեռատեսիլ—հեռուստացույց

ներծծիչ—փոշեծծիչ

Այն դեպքում, երբ արեւելահայ տարբերակը դիմում է փոխառութիւն, արեւմտահայ տարբերակը պատճենում է կամ դիմում ներքին լեզվամիջոցներին:

հանրակառք—տրամվայ

ժապավեն—կինոնկար

ձայնասփյուռ—ռադիո

դրամատուն—բանկ

⁵ Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, էջ 150:

⁶ Նշենք, որ 1916—1919 թ. Եղեռնից մազապուրծ 250 հազար հայերի՝ Արեւելյան Հայաստան ապաստանելը, ինչպէս նաև 1936 և 1947—48 թթ. տեղի ունեցած հայրենադարձութիւն շարժումը այս կամ այն չափով ստեղծեցին երկու տարբերակներով հաղորդակցվողների շփում, սակայն այդ լեզվական շփման հետեանքները արեւելահայ տարբերակի բառապաշարի վրա ուսումնասիրված չեն:

ժերակույտ—սենատ	ձայնանիշ—նոտա
ելմտական—ֆինանսական	նյութապաշտ—մատերիալիստ
շարժարվեստագետ—կինեմատոգրաֆ	համակարգ—սիստեմ
ճարտարարվեստ—ինդուստրիա	պաստառ—էկրան
բազմարվեստից հիմնարկ—պոլի-	նվագավար—դիրիժոր և այլն:
տեխնիկ ինստիտուտ	
համաժողով—կոնգրես	

Լի դեպ, նշենք, որ վերոհիշյալ օրինակներից միայն մի մասն է, որ կարելի է դասել բառապաշարի նեղ մասնագիտական տերմինների շերտին, մյուսները կարելի է դասել բառապաշարի չեզոք շերտին:

Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում բառապաշարի մեջ տեղի ունեցած տեղաշարժերը է՛լ ավելի են խորացնում երկու տարբերակների միջև արդեն դոյություն ունեցող բառային անշրպետը: Բառապաշարների հարստացման միտումների, նրանց զարգացման ուղղվածության համեմատությունից եզրակացնում ենք, որ 1920—30—40-ական թթ. ընթացքում երկու տարբերակների բառապաշարները իրարից հեռանում են:

Նկարագրված իրավիճակը երկու տարբերակների միջև թե՛ պատմահասարակական ու մշակութային առումով, թե՛ շարժարժված բառակազմական միջոցների տեսակետից մնում է անփոփոխ մինչև 1950-ական թթ.:

Երկրորդ փուլ. 1950-ական թթ. մինչև 1980-ական թթ. 1950-ական թթ. սկսած նկատվում են հասարակական-քաղաքական, մշակութային փոփոխություններ, երևան են գալիս արտալեզվական նոր գործոններ, ստեղծվում է նոր իրավիճակ, որն արտացոլվում է երկու տարբերակների բառապաշարների զարգացման միտումների վրա:

Սկսենք արևմտահայ տարբերակից: Լ. Զեքիյանը 1982 թ. հայերենագիտական գիտաժողովում կարգադրած իր զեկուցման մեջ՝ վերլուծել է արևմտյան սփյուռքի տարբեր հայ գաղութների մեջ լեզվի պահպանման, գոյատևման տարբեր պայմանները, որոնք սերտորեն կապված են տվյալ երկրի սոցիալական, կրոնական, քաղաքական կարգերի հետ: Պարզ է, որ գրական հայերենի արևմտյան տարբերակով հաղորդակցվող ամեն մի գաղութ բխվում է տարբեր, ամեն մեկին յուրահատուկ խնդիրների հետ: Կարելի է ասել, որքան գաղութ կա, այդքան էլ տարբեր գոյատևման, լեզվապահպանման խնդիրներ կան: Սակայն կա մի երևույթ, որն սկսած 1950—60-ական թթ. դառնում է ընդհանուր ամբողջ արևմտյան սփյուռքահայության համար. դա երկլեզվությունն է: Եթե մինչև 1940—50-ական թթ. առաջին և երկրորդ սերունդների համար հայերենը մայրենի լեզու էր և հաղորդակցման բնական միջոց, ապա երրորդ սերնդի համար, այսօրվա պատանիների համար, գուցե բացառությամբ Միջին Արևելքի մի քանի գաղութների, հայերենը ուսուցվում է որպես օտար լեզու: Երկլեզվությունն ինքնին դրական երևույթ է այն դեպքում, երբ տվյալ երկու լեզուները հասարակության մեջ ունեն համագործակցության և տեղի: Սակայն տվյալ դեպքում հայերենը զտնվում է ստորագույս վիճակում: Այս իրավիճակը սասանում է լեզվի դերն ու տեղը հայ գաղութի մեջ: Նոր իրավիճակում հայերենի և օտար լեզվի, որը կարող է լինել անգլերենը, ֆրանսերենը, իսպաներենը, հունարենը և այլն, միջդիպոմները կրկնապատկվում են, որի հետևանքով առօրյա խոսակցական լեզվի մեջ նկատվում է օտարաբանությունների ներխուժում: Այդ օտարաբանություններն այնքան են կայունանում բանավոր խոսքի մեջ, որ հեշտությամբ անցնում են գրավոր լեզվին. հիշենք, որ գրական լեզվի զարգացումը կատարվում է հիմնականում նրա բանավոր տարբերակի միջոցով: Այսպես, արևմտահայ տարբերակի գրավոր լեզվի մեջ վերջին տարիների ընթացքում նկատվում է մի շարք օտարաբանությունների մուտք, մի երևույթ, որը բնորոշ չէ արևմտահայ տարբերակի բառապաշարի զարգացման

7. Միջազգային հայերենագիտական գիտաժողով. Զեկուցումներ. Երևան, 1984, էջ 683:

նախորդ փուլերին: Բացի այդ, ԼԹԵ մինչև այժմ հազվադեպ փոխառություններն ընդգծվում էին մուդ տառերով կամ շղատառերով, ապա այժմ այդ էլ ոչ միշտ է արվում: Այսպես, արևմտահայ մամուլի մեջ հանդիպել ենք մետիաճեր, կրաֆիտի, սիվիլներ, կալա, Բոլոֆ, դրվիզ, սփօթ, Բոմփաֆթ, դիսֆ, քաֆթիֆ, թելեսիլժ, Բուֆիլ (սպեկուլյացիայի իմաստով), քի-շուրթ, մուտել, տելթա, Լեֆուրմուտիկ և այլ բառեր, որոնց մի մասը արտահայտում է նոր հասկացություններ, իսկ մյուս մասը բանավոր խոսքից եկած բառեր են, կապված երկրկրկության հետ:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում երևան է եկել նաև մեկ ուրիշ երևույթ, որը էդ. Ադայանի բնորոշմամբ կանվանենք հատկական փոխառություններ, իսկ Ասլանյանը դրանք անվանում է տեղայնարանություններ: Արևմտահայ տարբերակով հաղորդակցվողները, որոնք ապրում ու գործում են ցրված աշխարհի տարրեր երկրներում, որոնցից յուրաքանչյուրի պետական լեզուն տարբեր է, փոխ են առնում բառեր, որոնք հատուկ են միայն իրենց ապրած երկրի ժողովրդին, նրա կենցաղային սովորություններին: Այսպես, արդենտինահայ մամուլի մեջ կան փոխառություններ իսպաներենից, ամերիկահայ մամուլի մեջ՝ անգլերենից, իսկ ֆրանսահայ մամուլի մեջ՝ ֆրանսերենից և այլն: Հատկական փոխառությունները հասկանալի են միայն տվյալ երկրի հայերենով հաղորդակցվողներին և անհասկանալի՝ մյուսներին: Հատկական փոխառությունները մեծ չափերի են հասնում բանավոր խոսքում: Այս երևույթը, որ բխում է հաղորդակցվողների՝ տարբեր երկրների մեջ երկրլեզու լինույց, առայժմ արգելք չի հանդիսանում տարբեր զաղթյալներում ապրող արևմտահայերին իրար հասկանալ, այն չի վերաբերում հայերենի բառային հիմնական ֆոնդին: Սակայն եթե հետագայում հատկական փոխառությունները մեծ ծավալ ստանան (և այդ միտումը մեզ օրինալի է թվում մանավանդ բանավոր խոսքում), դա կարող է այս կամ այն չափով խախտել արևմտահայ տարբերակի բառապաշարի զարգացման համալսականությունը:

Բացի այդ, ընդհանրացնող մարմնի կամ բառապաշարի նորմավորումը ապահովող կոմիտեի բացակայության պատճառով նոր հասկացությունները արտահայտելու համար ստեղծվում ու գործածության մեջ են դրվում մի քանի նորաբանություններ միաժամանակ՝ լուսատիպ-լուսահան-լուսապատճեն-երկնօրինակ-լուսատիպ պատճեն, հեռասփյուռ-հեռատեսիլ-պատկերափյուռ, ձայնապնակ-ձայնասկսկածառ-երգապնակ և այլն: Այս երևույթը, ինչպես նախատեսվում արևմտահայ տարբերակի նորագույն բառապաշարի համալսական ուղղությամբ:

Ներկա ժամանակաշրջանում արևմտահայ տարբերակով հաղորդակցվողների՝ միևնույն աշխարհագրական սահմաններում համախմբված չլինելը, տարբեր երկրներում ցրված ապրելը, որպես արտալեզվական գործոններ, արտացոլվում են տարբերակի բառապաշարի զարգացման միտումների վրա:

Վերոհիշյալ երևույթներից կառույց է երևակացնել, որ վերջին 2—3 տասնամյակների ընթացքում արևմտահայ տարբերակով հաղորդակցվողների շրջապատում տեղի ունեցած փոփոխությունները, արտալեզվական գործոնների աստիճանական զարգացումը զգալի չափով փոխակերպում են տարբերակի բառապաշարի զարգացման մինչև այդ իրեն բնորոշ հատկանիշների ուղղվածությունը: Արտալեզվական գործոնների ազդեցության տակ ուղղվածվում է նոր միտում՝ փոխառությունների ավելի ազատ մուտք. բառապաշարի ստանդարտացման բացակայություն ու անհամալսականություն:

Արևելաճաղ տարբերակ: Վերջին երեք տասնամյակների ընթացքում արևելաճաղ տարբերակի բառապաշարի հարստացման միտումները կարելի է բնորոշել ֆրանսերեն «retour aux sources» արտահայտությամբ, այսինքն՝ «վերադարձ դեպի ակունքները»: Նախորդ փուլի ընթացքում կատարված անհատի՝ փոխառությունները փոխարինվում են լեզվում արդեն գոյություն ունեցող բառային միավորներով: 1950-ական թթ. սկսվում է օտար տեղմիները հայերենով արտահայտելու մի առողջ շարժում և նոր հասկացություններ:

ներքին լեզվամիջոցներով արտահայտելու միտում: Տերմինաբանական կոմիտեն պարզորոշ շարադրում է լեզվաշինության նորմավորման ու բառապաշարի մշակման հարցերի բնագավառում իր գործադրած սկզբունքները: «Պահպանել հայոց լեզվի անաղարտությունը, պայքարել չհիմնավորված նորամուծությունների դեմ, թույլ չտալ գրական հայերենը խճողել ժողովրդին անհասկանալի և անհարկի բառերով: Ռուսերենից և այլ լեզուներից փոխառնել այնպիսի բառեր ու տերմիններ, որոնց համարժեքները հայերենում չկան և չեն կարող կազմվել»⁸: 1965 թ. տերմինաբանական կոմիտեն որոշում է վերականգնել կուսակցություն, հեղափոխություն, սահմանադրություն, պատգամավոր բառերի գործածությունը: Հրատարակվում է տերմինային բառերի գուգահեռ չանի և առաջարկվում է մեծ մասամբ, բայց ոչ միշտ, նախապատվությունը տալ ծագումով հայերեն բառերին՝ վավերացում—ռատփիկացիա, համալիր—կոմպլեքս, մեկնարկ—ստաբա, հյուրախաղ—գաստրոլ, համակարգ—սխեմա և այլն:

Բառակերտման, լեզվաշինության վերաբերյալ վերջին 15 տարիների ընթացքում հրատարակված հոդվածները, ուսումնասիրությունները, առաջարկները⁹ ցույց են տալիս, որ նորաբանությունների կերտման լեզվամիջոցների, տերմինների ընտրության, անհարկի փոխառությունների վերացման հարցերի շուրջ հալ լեզվաբան մասնագետներն ունեն տարբեր, հաճախ իրարամերձ կարծիքներ: Հիշենք, որ դեռևս 1970-ական թթ. մերժվող հյուրախաղ, դավնեկիր, հարցազրույց, զբոսաշրջիկ, համույք, երգահան բառերը այսօր լեզուաբաններին են թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում: Այս կարևոր հարցերի շուրջ կայացող բանավեճը ներկայումս շարունակվում է: Սակայն, ընդհանուր առմամբ, վերջին 25 տարիների ընթացքում արևելահայ տարբերակի բառապաշարի հարստացման միտումները կարելի է բնորոշել փոխառությունների սահմանափակմամբ, նախորդ փուլի ընթացքում կատարված անհարկի փոխառությունները հայերեն բառերով փոխարինելու ձգտումով, նոր հասկացություններն ու հղացքները ներքին լեզվամիջոցներով արտահայտելու հակումով:

Վերջին 2—3 տասնամյակների ընթացքում արտալեզվական գործոնների ուղորդում տեղի ունեցած փոփոխությունները ստեղծում են նոր իրավիճակ ու պայմաններ, որոնք արտացոլվում են երկու տարբերակներով հաղորդակցվողների փոխհարաբերությունների մեջ: Արևելահայ և արևմտահայ տարբերակներով հաղորդակցվողների միջև վերականգնվում է կապը, մանավանդ՝ մշակութային հարաբերությունները, վերահաստատվում է այսպես ասած լեզվական կոնտակտը: Դա իրականացվում է տարբեր միջոցներով. մշակութային փոխանակումներ, սոցիոլոգիական ծավալում, կատարելագործման դասընթացներ սփյուռքահայ ուսուցիչների համար, գործնական ուղևորություններ, արևելահայ տարբերակով դասախոսություններ սփյուռքի զանազան երկրներում, արևելահայ մամուլի մեջ տպագրվող հոդվածներ արևմտահայ տարբերակով, ամառային ճամբարներ սփյուռքի պատանիների համար, Հայֆիլմի կինոնկարների ցուցադրում սփյուռքում, Հայկական հեռագրական գործակալության հեռատիպերի տպագրում սփյուռքի մամուլում և այլն: Այդ կապերի ընդլայնման ու ծավալման գործում մեծ է սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեությունը: Վերահաստատված լեզվական կոնտակտի շնորհիվ երևան է գալիս նոր իրավիճակ, որն ի հայտ է բերում երկու տարբերակների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները նորաբանությունների լրնագավառում:

Երկու տարբերակների մեջ նորակերտ բառային միավորների զուգադրական համեմատությունը երևան է հանում հետևյալ դեպքերը.

⁸ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու. Երևան, 1973, էջ 9:

⁹ Տե՛ս Անարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության. Երևան, 1982, էջ 7—65:

1. Լեզվական շփումը երկու տարբերակների միջև ստեղծում է լեզվական միջդիպման միջակ, փոխանցողական ղեկավարող դառնում են հաճախակի, որի հետևանքով որոշ նորակազմություններ փոխանցվում են մեկ տարբերակից մյուսը, օրինակ՝ երգահան, աշխարհամարտ, զովագղ, հասույթ, երաժշտաճոց, մարզիկ, գիտաժողով, փառատոն, դերուսույց, մարզիչ, գիտաժողով և այլն: Արևմտահայ բանավոր և գրավոր խոսքի մեջ հանդիպել ենք հեծանիվ, հեռախոս, հեռուստացույց, վարորդ բառերին: Այսպիսով, արևմտահայտաբանական լեզվական շփումների շնորհիվ երկու տարբերակների մեջ առաջանում է (տարբերակներն և սահմանափակ չափով) նորակազմությունների ընդհանուր բառային շերտ:

2. Երկու տարբերակները նոր բառը կառուցում են ներքին լեզվամիջոցներով, բայց տարբեր ձևերով: Սա ամենահաճախ հանդիպող դեպքն է.

ճակուղի—մայրուղի	խոսնակ—հաղորդավար
համակարգիչ—հաշվողական մեքենա	հեռաթոռ—ճապանախցիկ
մանրախոս—մանրաձայն	կայան—ճամբար
շարժանկարիչ—պատկերահան	հյուլական հրթիռ—միջուկային հրթիռ

3. Արևմտահայ տարբերակը նոր հղացքը արտահայտում է ներքին լեզվամիջոցներով, արևելահայ տարբերակը՝ փոխառությամբ.

սահիկ—սլայդ	ահարկիչ—տևողորհստ
տեսարկող (կամ տեսույց)—վիզուո	բարյուղատար նավ—տանկեր
ալլախոհ—դիսիդենտ	ծավալապաշտություն—էքսպանսիոնիզմ
կրկնուսույց—ռեպետիտոր	ձայններից—կասետ:

4. Երկու տարբերակներն էլ փոխառության են դիմել, ներքին լեզվամիջոցներով նոր բառ գեղ չի ստեղծվել. աֆորիզմ, էկոլոգիա, դիսպլեյ, ռադար, դիզայներ, ինֆորմատիկա, ընդ որում, յուրաքանչյուր տարբերակ փոխառյալ բառը հնչում է փոխատու լեզվի հնչմամբ, այսպիսով միևնույն փոխառյալ բառը տարբեր ձևով է հնչում երկու տարբերակների մեջ՝ էկոլոգիա—էկոլոժի, ինֆորմատիկա—ինֆորմատիկ, տակտիկա—թաքթիք և այլն:

5. Քանի որ երկու տարբերակները գործառնում են տարբեր հասարակական-քաղաքական, մշակութային պայմաններում, ապա գոյություն ունեն նոր հասկացություններ կամ հղացքներ, որոնք հատուկ են միայն մեկ տարբերակով հաղորդակցվողների, բայց ոչ մյուսների համար.

արևելահայ տարբերակ՝

պետրոլումում, հեռախոսավորում, աստղավան, հուշամրցաշար.

արևմտահայ տարբերակ՝

լրասփյուռ, հեռաձայնաբարտ, երկնքի հրշեջներ, լսողաչափություն, հարցախույզ, հեռավար, բազմամշակունություն և այլն:

6. Արևելահայ տարբերակի մեջ օգտագործվում են մեծ թվով հապավումներ, որոնք մեծ մասամբ անհասկանալի են արևմտահայերենով հաղորդակցվողներին: Արևմտահայ տարբերակը օգտագործում է հապավումներ, որոնք հատուկ են ընդունող երկրի վարչությանը և անհասկանալի՝ արևելահայ տարբերակով հաղորդակցվողներին:

7. Արևելահայ տարբերակը չունի արևմտահայ տարբերակին բնորոշ հատկական փոխառություններին համարժեք բառեր:

Վերջին 2—3 տասնամյակների ընթացքում երկու տարբերակների մեջ ստեղծված նորակերտ բառերի զուգադրական համեմատությունից կարելի է Լզրակացնել. ա) թեև երկու տարբերակներով հաղորդակցվողների միջև վեբահաստատված է լեզվական շփումը, բայցայն փոխանցումների թիվը փոխանցողական ղեկավարող մեկ տարբերակից մյուսը անկախ չէ. բ) չէ—

նալած երկու տարբերակների համար ընդունել են միևնույն բառակազմական միջոցները, բառաբարդման ընդհանուր տիպաբանությունը, միևնույն նոր հասկացությունների համար յուրաքանչյուր տարբերակ կերտում է տարբեր բառային միավոր. գ) քանի որ երկու տարբերակները գործառույթ են տարբեր պետական-հաստիքական-մշակութային միջավայրերում, ապա նոր հղացքները ևս երբեմն լինում են տարբեր, որը և ստեղծում է տարբեր նորաբանությունների պահանջ ամեն մի տարբերակի համար:

Ներկա զուգադրական համեմատությունը ցույց է տալիս, որ արդի հայերենի գրական երկու տարբերակների բառապաշարների հարստացման, բառաստեղծման միտումները տարբեր են և նրանց ուղղվածությունը տալիս է երկու ՌԱՌԱՊԱՀԱՐՆԵՐԻ ԻՐԱՐԻՑ ՀԵՌԱՑՄԱՆԸ: Ես չեմ բաժանում այն կարծիքը, ըստ որի ներկայումս արևմտահայ տարբերակով հաղորդակցվողը հեշտությամբ հասկանում է արևելահայ տարբերակը և ընդհակառակը: Գուցե դա վերաբերում է արևմտահայ տարբերակը լիակատար տիրապետող մտավորականությանը, լրագրողներին, ուսուցիչներին, գրողներին, այսինքն հաղորդակցվողների շնչին տոկոսին: Այս ուղղությամբ կատարած մեր հետադոտությունները պարզում են, որ արևմտահայերենով հաղորդակցվողները հասկանում են արևելահայերեն լեզվի միայն 70—75 տոկոսը: Այդ կարելի է բացատրել մի շարք գործոններով՝ հնչյունական, շարահյուսական և ձևաբանական: Մակայն բառապաշարների միջև դանդաղ, բայց շարունակ մեծացող անջրպետը այդ թերի հասկանալու կարևոր պատճառներից է: Այս կարելի է բացատրել նաև նրանով, որ արևմտահայ տարբերակը նահանջ է ապրել մի շարք երկրներում, և այդ նահանջը տարեցտարի մեծանում է:

Երկու տարբերակների բառապաշարները որքան իրարից հեռանան, այնքան մեծ կլինեն ազգային միասնական ընդհանուր լեզվի անվերադարձ բաժանումն ու տրոհումը: Իր բազմադարյան պատմության ընթացքում հայոց լեզուն միշտ եղել է ամբողջ հայ ժողովրդի միասնության խորհրդանշը: Ինչպես վահան Տերյանն է գրել՝ «Մայրենի լեզուն ազգային կուլտուրայի ամենախոշոր ու ամենահզոր գործոնն է»: Լեզվի տրոհումը տանում է դեպի ազգի տրոհում, դեպի մշակութային բաժանում: Ազգապահպանման, ազգային միասնությունը ապահովելու նախապայմանը լեզվապահպանումն է, միասնական ազգային լեզվի պահպանումը: Պետք է հիշել, որ այսօր հայոց լեզվով՝ որպես մայրենի լեզվով հաղորդակցվողների ընդհանուր թիվը, երկու տարբերակները միասին վերցրած, հասնում է միայն 4 ու կես միլիոնի (մեր հաշվումները մոտավոր են, այդ մասին վիճակագրական ճշգրիտ տվյալներ չկան): Մագումով հնդկերկրական լեզուների մեջ հայերենը ամենափոքրաթիվ հաղորդակցվողների ունեցող պետական լեզուն է, գուցե իսլանդերենից ու ալբաներենից հետո: Հայերեն հաղորդակցվողները կազմում են փոքրամասնություն և, որպեսզի այդ փոքրամասնության ազգային դարավոր հիշողությունը պահպանվի ու շարունակվի, որպեսզի եկող սերունդները, թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ, լինեն այդ հիշողության ժառանգորդներն ու շարունակողները, անհրաժեշտ է ապահովել ազգային միասնական լեզվի հարատևությունը, նրա մշտատևությունը: Պրոֆ. էդ. Աղայանը 1982 թ. հայերենագիտական գիտաժողովում կարդացած իր զեկուցման մեջ նշել է. «Ազգային լեզվի գոյությունը երկու գրական լեզվի տարբերակային ձևով ներկա դարաշրջանում, բնականաբար, զգալի դժվարություն է ներկայացնում Սովետական Հայաստանի հայության ու սփյուռքահայության մշակութային կյանքի միասնացման և շատ այլ տեսակետներից: Սփյուռքի հայության և Սովետական Հայաստանի կապերի ամրապնդումն ու առավել սերտացումը թեև աղբյուր է մեր ազգային լեզվի միասնացում ու ընդհանրացում, ուստի և

ույժմ համազգային միասնական գրական լեզվի ձևավորման խնդիրը կարծաշուրթաբար հարցերից մեկն է¹⁰։

Ակնհայտ է, որ հանձնաժողովներ կազմելով ու որոշումներ ընդունելով ներկա քաղաքական ու մշակութային պայմաններում անհնար է միասնական գրական լեզու ձևավորել։ Մեղ թվում է, որ անհրաժեշտ է նախ սկսել իրարից անկախ իրարից առավել ես չհեռացնելու ձգտումից։ Լեզվաբաններն այսօր ընդունում են, որ մարդու դիտակից միջամտությունը լեզվի բարդացման դանդաղ ընթացակարգում հնարավոր է։ Բառապաշարի ոլորտը լեզվի այն հիմնական բաժիններից է, որի զարգացմանը կարելի է ուղղություն տալ ու լեզվական կանխատեսումներ կատարել, քանի որ նրա համալրումը կատարվում է անընդհատ ու շարունակ, այն իրերն ավարտուն դործընթաց է։ Քանի որ իրարից անկախ իրարից առավել ես չհեռացնելու ձգտումները հիմնականում միևնույնն են, կաղապարները նույնն են, ապա նոր հասկացությունները կարող են հեշտությամբ արտահայտվել միևնույն նորարարություններով։ Դա կարող է երկու տարբերակների բառապաշարների միջև գոյություն ունեցող ու տարեցտարի մեծացող անջրպետը փոքրացնելու տոգորի քայլը լինել։ Այդ ծրագիրը իրականացնելու համար կարելի է կազմել իրարից անկախ իրարից առավել ես չհեռացնելու ձգտումներից ու լեզվաբաններից բաղկացած մի պաշտոնական մարմին։ Այդ ընդհանուր մշտական մարմնի կամ կոմիտեի հիմնական խնդիրը կլինի իրարից անկախ երեք տարին մեկ անգամ ի մի բերել նոր հղացքների հիման վրա կառուցված նորարարությունները իրարից անկախ իրարից առավել ես չհեռացնելու և նույնացնելու նպատակով, առաջարկել ընդհանուր լուծումներ և հրատարակել դրանք իրարից անկախ համար ընդհանուր ուղեցույցի մեջ։

Արևմտահայ տարբերակը չունի և երբեք չի ունեցել լեզվի զարգացումը, նրա անադարտությունը հսկող, չափավորող մարմին։ Այդ տարբերակը ներկա ժամանակաշրջանում գործառու է լեզվի զարգացման համար անբնական, տարերային պայմաններում։ Սփյուռքի պայմաններում չի կարող կազմակերպվել լեզվի պլանավորում, այսինքն՝ լեզվի մշակում, նորմավորում, նրա ուսուցման ու տարածման կազմակերպում, քանի որ նա չունի որևէ պետական հովանավորություն։ Արևմտահայերենը չունի այնպիսի պաշտոնական օրենսդրություն, որը կարող է ապահովել լեզվի դերն ու տեղը հասարակության մեջ։ Ընդհանուր մշտական տեղիներաբանական կոմիտեի ստեղծումը կարող է ինչ-որ չափով ճշգրտություն ու օրինաչափություն մտցնել արևմտահայ գրական լեզվի բառապաշարի արդիականացման մեջ։ Դա կարող է նաև այս կամ այն չափով պակասեցնել արևելահայ տարբերակի կատարած փոխառությունների քանակը։

Ինչ վերաբերում է երկու գրական տարբերակների բառապաշարների միջև եղած փոխաբերություններին ու նրանց հետագա զարգացման հեռանկարներին, ապա կարելի է երկու վարկած պատկերացնել.

1. ամեն մի տարբերակ նոր հասկացությունները կարտահայտի յուրովի, իրարից անկախ, աբստրակցիոն կամ ներքին լեզվամիջոցներով, ճիշտ այնպես, ինչպես տեղի է ունեցել մինչև ներկա ժամանակաշրջանը։ Այս դեպքում երկու տարբերակների բառապաշարների միջև արդեն գոյություն ունեցող անջրպետը անխուսափելիորեն կմեծանա։

2. Կհիմնվի ընդհանուր մշտական տեղիներաբանական կոմիտե, որի հրահանգներով ու առաջարկներով երկու տարբերակների բառապաշարների նորագույն շերտը կդառնա ընդհանուր։ Այս դեպքում երկու բառապաշարները եթե չմերձենան, գոնե իրարից առավել ես չեն հեռանա։

Սա ազգապահպանման, լեզվապահպանման ամենահրատապ հարցերից է։ Անկասկած, մենք արտահայտվում ենք ի նպաստ երկրորդ վարկածի։

¹⁰ Միջազգային հայերենագիտական գիտաժողով. Զեկուցումներ, Երևան, 1984, էջ 611—612։